Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 1734-Ն

որոշմամբ հաստատված կարգի 30-րդ կետի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԾԱԳԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 1734-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) մեկնարկած պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Ադոնցի փողոցի N 4/3 հասցեի N 171 բնակարանի և N 171 ավտոկայանատեղիի շահառու՝ Կարեն Էդուարդի Թամեյանը սույն թվականի նոյեմբերի 15-ին դիմում է ներկայացրել ՀՀ քաղաքաշինության կոմիտե՝ անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագրով իր ունեցած իրավունքը պահանջի իրավունքի զիջման հատուցելի գործարքով երրորդ անձի փոխանցելու վերաբերյալ:

Անշարժ գույքի նկարագիրը և իրավունքի օտարման գինն ու պայմանները՝ համաձայն Որոշմամբ հաստատված կարգի 28-րդ կետի 9-րդ ենթակետի բ) պարբերության

1. Անշարժ գույքի հասցեն	**Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Ադոնցի փողոցի 4/3 (չորս կոտորակ երեք)** հասցեում գտնվող «Միկշին» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասի (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական **26032019-01-0250**) վրա կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրի թիվ **4 (չորս)** մասնաշենքի (Երևանի քաղաքապետի կողմից **07.05.2018թ.** համաձայնեցված թիվ **01/18-05/1-Գ-1667-363** կառուցման նախագիծ, **07.05.2018թ.** թիվ **01/18-Գ-1667-432** շինարարության թույլտվություն) **3-րդ հարկի, 103 քառ.մետր** մակերեսով նախագծային թիվ **171 (հարյուր յոթանասունմեկ)** բնակարան (հատակագիծը կցվում է), այսուհետ՝ Բնակարան, և նախագծային համար **171 (հարյուր յոթանասունմեկ)** ավտոկայանատեղի, միասին (հետագա փոփոխություններով)՝ Անշարժ գույք, առանձին (հետագա փոփոխություններով)՝ Անշարժ գույքի միավոր
2. Անշարժ գույքի վիճակը	առանց ներքին հարդարման՝ սակայն արտաքին դռների և պատուհանների տեղադրմամբ սվաղած պատերով, ցեմենտյա շաղախից հատակով, ջեռուցման մարտկոցներով
3. Իրավունքի օտարման գինը՝ ըստ շահառուի առաջարկի	**71,000,000 (յոթանասունմեկ միլիոն) ՀՀ դրամ՝** ներառյալ ավելացված արժեքի հարկը
4. Վճարման պայմաններ	անկանխիկ եղանակով փոխանցման միջոցով՝ առանց հիփոթեքային վարկավորման կամ գործող հիփոթեքային պայմանագրի պարտավորությունների ստանձնման

Սույն հայտարարության հրապարակումից մինչև օրացուցային 14-րդ օրը ներառյալ հավակնորդների ցուցակում ընդգրկված ծառայողները կարող են սույն կարգի համաձայն հայտ ներկայացնել օտարվող գույքային իրավունքն օտարողի դիմումում առաջարկված գնով և վճարման պայմաններով ձեռքբերման համար: Մեկից ավելի հայտերի դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն օրացուցային 7-օրյա ժամկետում կազմակերպում է վիճակահանություն: Նախնական պայմանագրից ծագած իրավունքները երրորդ անձին օտարելու նպատակով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախնական համաձայնություն հայցած շահառուին Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն ներկայացնում է օտարման համաձայնություն մեկ հավակնորդի դեպքում՝ միակ հավակնորդին, իսկ մեկից ավելի հավակնորդների դեպքում՝ վիճակահանության արդյունքներով որոշված հավակնորդին օտարելու մասին:

Սույն ծրագրի շրջանակներում հավակնորդ են համարվում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2018 թվականի սեպտեմբերի 5-ի N 111-Ա հրամանի առաջին կետով հաստատված հավելվածում ընդգրկված այն ծառայողները, ովքեր Որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետի համաձայն ինքնաբերաբար հանված չեն հավակնորդների ցուցակից:

Ընդ որում, սույն ծրագրի շրջանակներում հավակնորդների ցուցակում ընդգրկված ծառայողի կողմից մասնակցության հայտը ներկայացվում է վերջինիս գործատուի միջոցով՝ հաստատելով, որ տվյալ հավակնորդի զբաղեցրած պաշտոնը համապատասխանում է Որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀ քաղաքաշինության կոմիտե:

Հեռախոս՝ 011621714, 011621776
Էլ.փոստ՝ petbnakaran@minurban.am

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 162
ՏԻՊ 17/1

ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ 171
ՏԻՊ 17
ՄԱՍՆԱՇԵՆՔ 4
ՄՈՒՏՔ 7
ՀԱՐԿ 3
ԲՆԱԿԱՐԱՆ 171
ՄԱԿԵՐԵՍ 103 ՔՄ





	ԲՆԱԿԱՐԱՆ ՏԻՊ 17	103 մ^2
1	Հոլլ	13.08 մ^2
2	Ընդհանուր սենյակ	24.54 մ^2
3	Խոհանոց	16.62 մ^2
4	Ննջասենյակ	18.98 մ^2
5	Ննջասենյակ	15.11 մ^2
6	Սանհանգույց	3.14 մ^2
7	Սանհանգույց	3.85 մ^2
8	Պատշգամբ	7.68 մ^2